



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3481

Դաշկոյ սիրու

1138



թ. 1903

891.71

Q-83

3/77


891.71
Q-83
3/77

ՄԱԿԱՐ ԳՈՐԿԻՑ

et
67

ԴԱՆԿՈՒ ՍԻՐՏԸ

թարգմ. Գ. Անանեան




ԹԻԳԼԻ Ա.

Տպարան Ա. Քութաթելամէի, Նիկ. 21

1903

891.71
Q-83
3/77




891.71
Q-83
3/77

ՀՅԱՎԱԾ ՎՈՐԵԾԱՔ

Дозволено цензурою, Тифлисъ, 10-го Июня
1904 г.

45615- ич.



42546-67Q

ԹԱՆԿՈՒ ՍԻՐՏԸ

Պառաւ Խղերգիլի գրոյցներից

Մեզնից շատ առաջ աշխարհիս վրաէ,
չը գիտեմ որտեղ, մարդիկ էին ապրում:
Գիտեմ միայն, որ մարդկանց ալդ խըմ-
բերը շրջապատուած էին մի կողմից դաշտա-
վալրով, իսկ միւս երեք կողմերից մեծ անան-
ցանելի անտառներով։ Սակաւապետ, զուարթ,
ուժեղ և համարձակ մարդիկ էին դրանք։
Պէտք է որ բոշաներ լինէին։ Եւ ահա եկաւ
այնպիսի վատ ժամանակ, երբ ուրիշ տեղերից
երեւան եկան ուրիշ ցեղեր և առաջիններին
մղեցին գէպի անտառի խորքը։ Այնտեղ անտա-
ռի խորքում ճահիճ էր և խաւար, որովհետեւ
անտառը հինաւուրի էր, ճիւղերը այնտեղ
այնպէս խիտ հիւսուել էին միմեանց, որ չէր
երեւում երկինքը և արեգակի ճառագալթները
հազիւ կարողանում էին ներս թափանցել։
Ընկնում էին ճառագալթները ճահիճների ջրի

վրայ, բարձրանում էր գարշահոտութիւն և մարդիկ մեռնում էին միմեանց ետևից։ Կանայքը և երեխաները սկսեցին լալ, իսկ հայրերը մտածունքից ընկան թախծի մէջ։ Պէտք էր հեռանալ անտառից. իսկ հեռանալու համար կար միմիայն երկու ճանապարհ. մէկը գէպի ետ, որտեղ չար և ուժեղ թշնամին էր, իսկ միւսը գէպի առաջ, ուր կանգնած կալին այնպիսի հսկայ ծառեր, որոնք իրանց ուժեղ ճիւղերը իրար անցկացրել՝ փաթաթուել էին և ոլորուն արմատներով խորը մտել ճահճի մածուցիկ տղմի մէջ։ Ծառերը ցերեկը, մռալլ աղջամուղի մէջ, ինչպէս քար կանգնած էին լուռ և անշարժ, իսկ երեկոները աւելի խտանում էին մարդկանց շուրջը, երբ վառւում էին խարոյկները։ Եւ շարունակ, գիշեր ցերեկ, այդ մարդիկ շրջապատուած էին միա պատրաստում էր անապատի ազատութեանը սովոր մարդկանց ճնշելու։ Աւելի սարսափելի էր գառնում, երբ քամին խփում էր ծառերի կատարներին և անտառը խուլ մանչում էր. կարծես սպառաստում էր անապատի ազատութեանը մեղքի այն մարդկանց համար, որոնք ծածկուել էին թշնամիներից։ Դրանք այնուամենալիւ ուժեղ մարդիկ էին և կարող էին գնալ կոռուել մինչև վերջին շունչը այն մարդկանց հետ,

որոնք մի անգամ յաղթել էին իրենց. բայց չէին ուզում մեռնել կոռուի մէջ, որովհետեւ ունէին մի այնպիսի ուխտ, որ եթէ իրանք մեռնէին, կը մեռնէր և՝ ուխտը իրանց հետ։ Նստած մտածում էին երկար գիշերներ, անտառի խուլ աղմուկի և ճահճների թունաւոր գարշահոտութեան մէջ։ Նստած էին և խարոյկների շուաքները թռչկոտում էին ու լուռ պառում իրանց շուրջը. թռում էր ամենքին, որ ոչ թէ շուաքներն են պարում, այլ յաղթութիւն են աղաղակում անտառի և ճահճների շար ոգիները... Մարդիկ նստած էին և շարունակ մտածում էին։ Սակայն ոչ մի բան, ոչ աշխատանքը, ոչ կանալքը տինպէս չեն թռւլացնում մարմինն ու հոգին, ինչպէս տիրուր մտքերը, որոնք կրծում են մարդուս սիրտը, ինչպէս օձեր։ Եւ մտածմունքից մարդիկ թռւլացան, ընկաւ ահը դրանց մէջ, կաշկանդուեցան ուժեղ ձեռքերը, կանալքը սկսեցին յալ ճահճի գարշահոտութիւնից մեռածների վրայ և իրանց լացով աւելի սարսափելի էին դարձնում կենդանի մնացած, ահով կաշկանդուած մարդկանց վիճակը։ Վախկոտ խօսքեր լսելի էր լինում անտառում, սկիզբը երկշոտ ու ցածը, իսկ յետոյ աւելի բարձր և բարձր։ Արդէն ուզում էին գնալ

թշնամու մօտ՝ իրենց անձն ու ազատութիւնը զոհելու։ Մահից սարսափած՝ ոչ ոք չէր վախենում ստրկական կեանքից։ Բայց ահա այստեղ էր, որ երեցաւ Դանկօն և ինքը միայն ազատեց բոլորին։

Դանկօն մի գեղեցիկ երիտասարդ էր։ Գեղեցիկները միշտ համարձակ են լինում. և ահա ասում է նա իր ընկերներին։

—Մտածելով քարը ճանապարհից չի գլորուի. ով ոչինչ չէ անում, նրանից ոչինչ չի դուրս գալ։ Ի՞սչ ենք մեր ոլժերը մտածմունքի և թախծի մէջ վատնում։ Վերկացէք, գնանք, անցնենք անտառը. չէ՞ որ անտառը ունի վերջ, աշխարհիս երեսին ամեն ինչը ունի վերջ. գէհ, գնանք։

Նայեցին Դանկօի վրայ և տեսան, որ նա ամենքից լաւն է, որովհետև նրա աչքերում փալլում էր մեծ ոլժ և կենդանի կրակ։

—Առաջնորդիր դու մեզ. ասացին նրանք և Դանկօն առաջնորդեց։ Հաւատալով Դանկօին, ամենքը միաբան գնացին ետևից։ Ճանապարհը դժուար էր և խաւար. իւրաքանչիւր քալլափոխում ճահիճը բանում էր իր ագահ, փթած բերանը և կուլ տալիս մարդկանց. ծառերը ինչպէս հսկալ պատ կապում էին

ճանապարհը և տարածել էին չորս կողմ արմատներ։

Իւրաքանչիւր քալլափոխում թափւում էր արիւն և քրտինք։

Գնում էին երկար ժամանակ, իսկ անտառը շարունակ խտանում էր և մարդկանց ոլժը հետզհետէ պակասում, ահա արդէն սկսեցին տրտնջալ, որ անփորձ և երիտասարդ Դանկօն տանում է անյալտ աեղ. իսկ Դանկօն ուրախ և կայտառ գնում էր առաջ։

Յանկարծ անտառում բարձրացաւ փոթորիկ, ծառերը շշնջացին խուլ և ահեղ։ Պատեց մի այնպիսի խաւար, որ կարծես աշխարհիս սկզբնաւորութիւնից եղած բոլոր գիշերները միանգամից հաւաքուեցին։

Մեծ ծառերի միջով գնում էին փոքրիկ մարդիկ, գնում էին կայծակի ահեղ աղմուկի մէջ։ Հսկալ անտառը օրօրուելով ճռճում—մռնչում էր չար երգեր, իսկ կայծակները թռչելով, վախեցնում և զալրացնում էին մարդկանց, լուսաւորելով ըոպէարար կապոյտ կրակով և անյալտանում նոյնպէս արագ, ինչպէս արագ երեսում։

Կայծակի կրակով լուսաւորուած ծառերը, ինչպէս մարդիկ, չորս կողմ տարածելով երկար ձեռքեր և կազմելով խիտ ցանց՝ աշխատում

էին կանգնեցնել խաւարի իշխանութիւնից
փախչող մարդկանց: Ճիւղերի խաւարից գնա-
ցողների վրայ նայում էր մի ինչ որ սարսափելի
մութ և սառը բան: Անապարհը դժուար էր և
մարդիկ լոգնելով՝ լուսահատուեցին: Ամաչում
էին իրանց անզօրութիւնը խոստովանել և ահա
բարկութեամբ և չարութեամբ լցուած, թափ-
ւեցին Դանկօի վրայ, որը գնում էր առաջ:
Սկսեցին յանդիմանել Դանկօին, որ առաջ-
նորդելու ընդունակութիւն չունի և ահա թէ
ինչպէս:

Յոգնած և չարացած՝ կանգնեցին ու սկսե-
ցին Դանկօին դատել, խաւարի և լաղթու-
թիւն տանող անտառի աղմուկի մէջ:

— Դու, — ասացին նրանք — աննշան և
վնասակար մարդ ես: Դու բերիր, յոզնեցը իր
մեղ և դրա համար էլ պէտքէ մեռնես;

Կայծակը և որոտմունքը հաստատեցին
մարդկանց վճիռը:

— Դուք ասացիք՝ առաջնորդիր — և ես էլ
առաջնորդեցի. աղաղակեց Դանկօն, կանգնելով
դէմ յանդիման. — ես ունեցայ քաջութիւն
երկար ճանապարհ գնալու. դուք միմիայն
գնում էք, գնում էք առանց հաւկանալու,
ինչպէս ոչխարների հօտ:

Բայց այս խօսքերը աւելի զալրացրին:

— Դու պէտք է մեռնես, պէտք է մեռ-
նես. աղաղակում էին ամենքը:

Իսկ անտառը թնդում էր և դղրդում
շարունակ, արձագանք տալով մարդկանց
ձայներին և կայծակը պատառուել էր խա-
ւարը: Դանկօն նայեց մարդկանց վրայ, որոնց
համար նա այնքան չարչարուեց և տեսաւ որ
նման են գաղաների: Դանկօի շուրջը կանգնած
էին շատ մարդիկ, բայց նոցա մէջ չը կար
ազնւութիւն և չէր կարելի նոցանից գթու-
թիւն սպասել: Այս ժամանակ Դանկօի սրտում
բարձրացաւ զարութ, բայց որովհետեւ խղճում
էր մարդկանց, շուտով հանգաւ: Դանկօն սի-
րում էր ալդ մարդկանց և մտածում էր
գուցէ առանց իրան կորչեն. և ահա
դրանց ազատելու ցանկութիւնը, ինչպէս պար-
ծառ կրակ՝ բորբոքեց Դանկօի սիրտը և
Դանկօի աչքերումը փայլեց ուժեղ կրակի
կայծերը. իսկ մարդիկը տեսնելով ալդ, կարե-
ցին որ Դանկօն կատաղել է և գալթերի նման
զգուշութեամբ՝ աւելի խիտ շրջապատեցին,
որպէս զի հեշտութեամբ կարողանան բռնել
և սպանել: Դանկօն հասկացաւ դրանց միտքը
և սիրտը աւելի բոցավառուեց, որովհետեւ
նրանց մտքերը Դանկօի սրտի մէջ ծագեցրեց
թախիծ:

Իսկ անտառը երգում էր շարունակ իր
տիսուր երգը, երկինքը որոտում էր և դալիս
էր անձրեւ:

—Ի՞նչ անեմ այս մարդկանց համար—
աղաղակեց Դանկօն աւելի բարձր քան որոտ-
մունքը:

Եւ ահա յանկարծ Դանկօն երկու ձեռքով
պատառեց իր կուրծքը, գուրս քաշեց սիրտը
և բարձրացրեց վեր:

Սիրտը, ինչպէս արեգակ, վառւում էր,
պայծառ և աւելի պայծառ քան արեգակը. ան-
տառը լուեց, լուսաւորուելով սիրոյ այս ջահով,
լուսին տեղի տուեց խաւարը և անտառի խոր-
քում դողալով, խորասուզուեց ճահճի փթած
բերանի մէջ:

Մարդիկ զարմացած քար կտրուեցան:

—Գնմնք—բացականչեց Դանկօն անցնե-
լով սուած և լուսաւորելով ճսնապարհը
բարձր բռնած ալրւող սրտով:

Հիացած և հետաքրքրուած՝ ամենքը հե-
տևեցին: Այն ժամանակ ծառերը նորից դղրդա-
ցին, զարմացած օրօրելով կատարները, բայց
փախչող մարդկանց ըարձրացրած ձայնը խլաց-
րեց անտառի աղմուկը: Ամենքը փախչում էին
արագ և համարձակ, ալրւող սրտի հըաշալի
տեսարանով ոգեսրուած. ճիշտ է, դարձեալ

ընկնում էին, բայց ընկնում էին առանց
գանգատուելու և առանց լացի, իսկ Դանկօն
շարունակ գնում էր առաջ, և նրա սիրտը
բորբոքում ալրվում էր:

Եւ ահա յանկարծ տեղի տուեց անտառը,
տեղի տուեց և մնաց ետեւ խիտ և համը անտա-
ռը. արեգակի լոյսը ծովի նման և անձրեսով
զովացած մաքուր օդը, միանգամից ամենքի
վրայ սփռուեց: Այնտեղ ետևում փալլատակում
էր, իսկ այստեղ լուսաւորում էր արեգակը,
շնչում էր տափարակը, խոտերի մէջ անձրեսի
կաթիները աղամանդի նման փալլում էին.
փալլում էր և գետը, ինչպէս ոսկի: Երեկոյ
էր. վերջալոյսի ճառագայթներից գետը երևում
էր կարմիր, ինչպէս այն արեան տաք շատրուա-
նը, որ ցայտում էր Դանկօնի կրծքից:

Հպարտ և համարձակ՝ մեռնող Դանկօն
նայեց իր առաջը լայն տափարակին, ուզգեց
ուրախ հայեացքը իր առաջը բացուած ազատ
հողին և ծիծաղեց հպարտութեամբ, ապա
ընկաւ ու մեռաւ:

Ետևում մնացած ծառերը զարմացած ցածր
շնչում էին և խոտերը ցողուած Դանկօնի
արիւնով, ձայնակցում էին ծառերին:

Մարդիկ լի լուսերով և ուրախ, չը նկա-
տեցին Դանկօնի մահը և չը տեսան որ Դանկօն

գիտակի մօտ դեռ ես վառվում է նրա համրածակ սիրտը. միմիայն մի զգոյշ մարդ նկատեց և մի ինչ որ բանից վախենալով՝ դըեց ոտքը համարձակ սրտի վրայ... Սիրտը ցըիւ գալով և գառնալով կայծեր՝ հանգաւ.

Ահա որտեղից են առաջացել այն կապուտ
կայծերը, որոնք երևում են մըրկից առաջ։

2013

